

**Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ**

**ԼՂՀ դպրոցականների VI սպարտակիադայի ծրագրով աղջիկների և պատանիների միջև վոլեյբոլի առաջնության**

**1. Նպատակը և խնդիրները**

- վոլեյբոլի մասսայականացում հանրապետությունում,
- մարզիկների վարպետության բարձրացում,
- առողջ ապրելակերպի քարոզում,
- ուժեղագույն մարզիկների բացահայտում՝ ԼՂՀ տղամարդկանց և կանանց հավաքական թիմերը համալրելու համար:

**2. Առաջնության անցկացման վայրը և ժամկետը**

Առաջնությունը անց է կացվելու Ստեփանակերտ քաղաքի հ.6 հիմնական դպրոցի մարզադահլիճում:

Աղջիկների միջև՝ փետրվարի 2-6-ը:

Պատանիների միջև՝ փետրվարի 9-13-ը:

*Փետրվարի 2-ին և 9-ին մարզիչ ներկայացուցիչների հավաք ԼՂՀ կրթության և գիտության նախարարության/այսուհետ՝ նախարարություն/ շենքում ժամը 17.00-ին:*

**3. Առաջնության մասնակիցները**

Առաջնությանը թույլատրվում է մասնակցել Ստեփանակերտ քաղաքի հանրակրթական, միջին մասնագիտական ու արհեստագործական ուսումնական հաստատությունների հաղթող և շրջանների աղջիկների ու պատանիների հավաքական թիմերին: Թիմերի կազմը՝ 10-ական մարզիկ և 1 մարզիչ-ներկայացուցիչ:

Մրցումներին իրավունք ունեն մասնակցել 1998 թ. ծնված և ցածր տարիքի աղջիկներ և պատանիներ:

**4. Առաջնության անցկացման կարգը**

Առաջնությունը անց է կացվելու խմբային եղանակով: Երկու խմբերի 1-ին տեղեր գրաված թիմերը մրցելու են 1-ին և 2-րդ տեղերի համար, 2-րդ տեղեր գրաված թիմերը՝ 3-րդ և 4-րդ տեղերի համար: Թիմերի տեղերը որոշվելու են միավորների առավելագույն քանակով: Հաղթանակի համար տրվում է 1 միավոր, պարտության դեպքում՝ 0 միավոր, թիմի չներկայանալու դեպքում գրանցվում է 0 : 3 հաշիվ / 0 : 25 /:

Երկու թիմերի միավորների հավասարության դեպքում առավելությունը տրվում է նրանց միջև կայացած հանդիպման արդյունքում հաղթող թիմին: Երկու և ավելի թիմերի միավորների հավասարության դեպքում առավելությունը տրվում է՝

ա/ խաղափուլերի առավելագույն տարբերություն ունեցող թիմին,

բ/ խաղափուլերում գնդակների առավելագույն տարբերություն ունեցող թիմին:

Չհայտավորված խաղացողի հայտնաբերման դեպքում թիմին գրանցվում է պարտություն՝ անկախ փաստացի արդյունքներից:

Հանդիպման զույգի մարզաշապիկների գույների համընկնման դեպքում դաշտի տեր համարվող թիմը փոխում է մարզաշապիկը: Դաշտի տեր է համարվում զույգի առաջինը նշված թիմը:

### **5. Առաջնության ղեկավարությունը**

Առաջնության ղեկավարությունը իրականացնում են նախարարությունը և ԼՂՀ կառավարությանն առընթեր սպորտի պետական կոմիտեն, իսկ անմիջական պատասխանատվությունը դրվում է նախարարության կողմից հաստատված մրցավարական հանձնախմբի վրա:

### **6. Մասնակիցների ընդունման կարգը և ծախսերը**

Առաջնության մասնակիցների ճանապարհածախսի, սննդի, գիշերավարձի, մրցավարների և սպասարկող անձնակազմի վարձատրության, հաղթողների պարգևատրման ծախսերը հոգում է նախարարությունը:

### **7. Պարգևատրումը**

Առաջնությունում 1-ին, 2-րդ, 3-րդ տեղեր գրաված թիմերը կպարգևատրվեն նախարարության համապատասխան կարգի դիպլոմներով, իսկ թիմերի անդամները՝ մեդալներով: Կպարգևատրվեն նաև լավագույն խաղացողները՝ մեկական աղջիկ և տղա:

### **8. Հայտերը**

Առաջնության մասնակից թիմերի անվանական հայտերը երկու օրինակից ներկայացվում են մանդատային հանձնախմբին ժամանման օրերին՝ փետրվարի 2-ին և 9-ին:

Սույն կանոնակարգը հանդիսանում է առաջնությանը մասնակցելու պաշտոնական հրավեր:

#### ***Ծանոթություն.***

ա. Թիմերի մարզիկները իրենց հետ պետք է ունենան ծննդյան վկայականների պատճենները՝ համապատասխան ուսումնական հաստատության տնօրենի ստորագրությամբ և կնիքով:

բ. Մարզադահլիճում մարզիչ-ներկայացուցիչների ներկայությունը մարզահա - գուստով պարտադիր է:

***Նախարարության ռազմահայրենասիրական, ֆիզիկական դաստիարակության և հասարակական կազմակերպությունների հետ կապերի բաժին***